ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՆԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԵՃՅԱՆ



Նորապսակ Տ. Գնել եպիսկոպոսը ծնվել է 1915 թվականի դեկտեմբերին Կիլիկիայի Ադանա քաղաքում, Վանեցի ծնողներից։ Աշխարհական անունը եղել է Թովմաս։

Սրբազանի հոր՝ Հովսեփի՝ հորեղբորորդին է եղել Աղթամարի վերջին կաթողիկոս Խաչատուր Շիրոյանը։

Պատանի Թովմասը իր նախնական կրթությունն ստացել է Լավոդիկե քաղաքի (Սիրիա) հայոց Սրբոց Հակոբյանց ազգային վարժարանում։

1928 թվականին նա ընդունվում է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը, որի քառամյա դասընթացը ավարտելով 1934 թվականին, Թորգոմ պատրիարքից ձեռնադրվում է սարկավագ։ 1937 թվականի հունիսին Հալեպի թեմի երբեմնի առաջնորդ Տ. Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանից, Հալեպի Ս. Քառասնից մանկանց եկեղեցում, ձեռնադրվում է կուսակրոն քահանա, վերանվանվելով Տ. Գնել աբեղա, և ապա Հալեպի թեմին ենթակա մի շարք շրջաններում հովվական և ուսուցչական պաշտոններ է վարում մինչև 1941 թվականը։ Նույն տարին ընդունվում է Կիլիկյան Կաթողիկոսության միաբանության շարքերը և Կաթողիկոսարանից ներս նշանակվում է կարևոր պաշտոնների՝ որպես տպարանի տեսուչ, Անթիլիասի Մայր Տաճարի դպրապետ, Դպրեվանքի ուսուցիչ և «Հասկ» ամսագրի խմբագրական կազմի անդամ և յուրովսանն աշխատում է օգտակար լինել Կիլիկյան Աթոռին։

1942—1943 թվականներին հաճախում է նաև Բեյրութի Ամերիկյան համալսարանի Ս. Գրքի գրականության, Ընդհանուր Եկեղեցու պատմության և երաժշտության դասընթացներին։

1948 թվականին երջանկահիշատակ Տ. Գարեգին Կաթողիկոսից ստանում է ծայրագույն վարդապետի աստիճան։

1943 թվականից սկսյալ վարում է քարոզչական պաշտոն Բեյրութի հայոց Նոր Հաջըն թաղամասի Ս. Գեորգ եկեղեցում, միաժամանակ հայոց լեզու դասավանդելով Բեյրութի ազգային Սահակ-Մեսրոպյան վարժարանի վերին դասարաններում։

Հիշատակության արժանի են Գնել վարդապետի հատկապես Կիլիկյան Կաթողիկոսության տպարանի տեսչության տարիները։ Նրա ջանքերով և հսկողության ներքո հրատարակվում են Բաբգեն աթոռակից Կաթողիկոսի «Անկյուրիո ձեռագրաց ցուցակ»-ը, Ստեփանոս Սյոմեցու «Մեկնութիւն չորից

Աւետարանչաց» և «Մեկնութիւն Եղեկիէլի» գործերը և մի շարք այլ արժեքաւոր հրատարակութիւններ։

Գերապատիվ Տ. Գնել եպիսկոպոսը Կիլիկիայի Կաթողիկոսութեան օրինապահ միաբանութեան աչքի ընկնող անդամներից մեկն է, որպես էջմիածնասեր և հայրենասեր հոգևորական։

Գնել եպիսկոպոսը մեր պատրաստված հոգևորականներից մեկն է, գտնվում է իր ուժերի հատունության շրջանում և լի է եռանդով՝ ծառայելու մեր Եկեղեցուն և հավատավոր ժողովրդին։

Մեր բոլորի հավատն այն է, որ սրբազանը իր ապագա գործունեությամբ ևս կարդարացնի Իր հավատացյալ ժողովրդի բարձր վստահությունը։

Շնորհավորելով Ներապատիվ Տ. Գնել եպիսկոպոսին, մաղթում ենք նրան հաջողություններ իր նոր և պատասխանատու կոչման մեջ։